ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № GA-EU/09/2022

ՀՀ, ք. Երևան

30.09.2022 թվական

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, (այսուհետ՝ «Պատվիրատու») ՝ ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության համաձայն, մի կողմից, և **«ՑՈՒԿ ԷՆԴ ԲԵՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (այսուհետ՝ «Կատարող») ՝ ի դեմս տնօրեն Աշոտ Հովակիմյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության համաձայն, մյուս կողմից, յուրաքանչյուրն առանձին այսուհետ նաև՝ «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր», կնքեցին ծառայությունների վճարովի մատուցման սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. **«Ամփոփագիր»** (անգլ.՝ Brief) ՝ Կատարողի կողմից սահմանված հարցաթերթ, որը լրացնում է Պատվիրատուն, որպես Պատվերի բաղկացուցիչ մաս, մինչև ծառայությունների մատուցման պայմանների վերաբերյալ բանակցությունները սկսելը և պատվերը հավելվածով հաստատելը: Ամփոփագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և պարունակում է սույն Պայմանագրով նախատեսված պարտադիր տվյալները:

1.2. **«Հավելված»**՝ Երկկողմանիորեն հաստատված հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և օգտագործվում Պայմանագրի ամբողջական մեկնաբանման համար:

1.3. **«Սկզբնական ժամկետ»**՝ Հավելվածով Կատարողի համար սահմանված ծառայությունների փաստացի մատուցման առաջին օրը:

1.4. **«Վերջնական ժամկետ»**՝ Հավելվածով Կատարողի համար սահմանված ծառայությունների փաստացի մատուցման վերջին օրը և/կամ հանձնման-ընդունման ակտը հաստատելու օրը:

1.5. «**Միջանկյալ ժամկետ»**՝ ծառայությունների մատուցման ընթացքում և/կամ աշխատանքի առանձին փուլերի ժամանակ Պատվիրատուի կողմից ծառայությունների տարբերակների հաստատման, մերժման, փոփոխություններ կատարելու, առաջարկներ ներկայացնելու ժամկետները:

1.6. **«Տեղեկատվություն»՝** Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և Պատվիրատուի տիրապետման ներքո գտնվող տեղեկատվություն:

1.7. **«Աշխատանքային նյութեր»** (անգլ.՝ Working files) ՝ Կատարողի կողմից ծառայության մատուցման ընթացքում ստեղծված նյութերը ցանկացած ձևով և կրչով՝ համաձայն հավելվածի, բացառությամբ չհաստատված տարբերակների:

1.8. **«Մտավոր սեփականության օբյեկտ»՝** Կատարողի կողմից ծառայությունների մատուցման ընթացքում և արդյունքում ստեղծված օբյեկտները:

1.9. **«Ծառայության տարբերակներ»՝** Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուին ներկայացված և Պատվիրատուի կողմից վերջիններից հաստատման ենթակա մտավոր սեփականության օբյեկտների տարբերակները:

1.10. **«Մեկնաբանություն»՝** Պատվիրատուի կողմից Կատարողի ներկայացրած ծառայության տարբերակ(ներ)ում ճշգրտող փոփոխություններ կատարելու վերաբերյալ գրավոր առաջարկ:

1.11. **«Հաստատված տարբերակ»՝** Պատվիրատուի կողմից Կատարողի ներկայացրած Տարբերակներից ընտրված այն տարբերակը, որի նկատմամբ նրան են անցնում մտավոր սեփականության բացառիկ գույքային իրավունքները:

1.12. **«Բացառիկ գույքային իրավունք»՝** մտավոր սեփականության օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք:

1.13. **«Տիրապետման իրավունք»՝** գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն:

1.14. **«Օգտագործման իրավունք»՝** գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորություն:

1.15. **«Տնօրինման իրավունք»՝** գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորություն:

1.16. **«Ծառայության որակի թերություն»՝** Ամփոփագրով, Պայմանագրով և հավելվածներով սահմանված պահանջներին չհամապատասխանող ծառայության մատուցում:

1.17. **«Ծառայության պատշաճ մատուցում»՝** Ամփոփագրով, Պայմանագրով և հավելվածներով սահմանված պահանջներին համապատասխան ծառայության մատուցում:

1.18. **«Էքսկլյուզիվության պայման»**՝ Պայման, որի համաձայն Պայմանագրի Կողմերը սույն Պայմանագրով նախատեսվող ծառայությունների կապակցությամբ չեն կարող համագործակցել մյուս Կողմի մրցակից ընկերությունների հետ:

1.19. **«Երկարաժամկետ պայմանագրի պայման»**՝ Պայման, որի համաձայն Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում կատարել իր պարտականությունները և կրում է Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու բացասական հետևանքները: Այս պայմանագրի նվազագույն ժամկետը մեկ տարին է:

1.20. **«Երկարաժամկետ չորակված պայմանագիր»**՝ Դեպքերը, երբ Պայմանագրի 1.18.-րդ կետի իմաստով Երկարաժամկետ պայմանագրի պայմանը նախատեսված չէ:

1.21. **«Գաղտնի տվյալների մշակում»**՝ անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է գաղտնի տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:

1.22. **«Պայմանագրի էական խախտում»**՝ չվերացվող թերություններ, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ:

1.23. **«Պաշտոնական հաղորդակցության միջոց»**՝ Փոխադարձաբար համաձայնեցված կոնտակտային եղանակներ, որոնց միջոցով Կողմերը պարտավորվում են վարել Պայմանագրին վերաբերող ցանկացած հաղորդակցություն: Դրանք պարտադիր սահմանվանվում են ամփոփագրում և/կամ հավելվածում:

2. ՄԻՆՉ-ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՓՈՒԼ

2.1. Կողմերը հաստատում են, որ սույն Պայմանագրի դյույթները տարածվում են Կատարողի կողմից Պատվիրատուի լրացրած ամփոփագիրը ստանալու օրից սկսած՝ 15.07.2022թ.:

2.2. Պատվիրատուն հասկանում և ընդունում է, որ ծառայությունների մատուցման հիմքում Պայմանագրից և կից հավելվածներից զատ ընկած են Կողմերի էլեկտրոնային հաղորդակցությունը և Ամփոփագիրը:

Պատվիրատուն կրում է իր կողմից Ամփոփագիրը չլրացնելու կամ թերի լրացնելու և/կամ տեղեկատվությունը չտրամադրելու կամ թերի տրամադրելու հետևանքով առաջացած հնարավոր ռիսկերը:

2.3. Ծառայությունների որակյալ մատուցման համար անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն, որը Պատվիրատուն փոխանցել է Կատարողին բանավոր ձևով վերջինս պարտավորվում է նաև տրամադրել պաշտոնական հաղորդակցության միջոցներով: Պատվիրատուն կրում է նման տեղեկատվությունը չտրամադրելու կամ թերի տրամադրելու ռիսկերը և հետևանքները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

3.1. Կատարողը պարտավորվում է Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Պատվիրատուի պահանջով մատուցել Պայմանագրին կից հավելվածներով սահմանված Ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները և Պայմանագրով ու կից հավելվածներով սահմանված չափով ու կարգով վճարել դրանց դիմաց:

3.2. **Պատվերների տրման կարգը.**

Պատվիրատուն սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները պատվիրում է համապատասխան Ամփոփագրի լրացմամբ և Պայմանագրին կից հավելվածներով, որոնք ներառում են Ծառայությունների մատուցման կարգը, պայմանները և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տվյալները:

Պատվիրատուի կողմից Պատվերները տրվում են Պաշտոնական հաղորդակցության միջոցներով:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Ծառայությունների մատուցման սկզբնական, միջանկյալ և վերջնական ժամկետները սահմանվում են հավելվածով և կարող են փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

4.2. Ծառայությունների մատուցման սկզբնական, միջանկյալ և վերջնական ժամկետները կարող են Կատարողի կողմից միակողմանիորեն վերախմբագրվել Պատվիրատուի կողմից սույն Հավելվածով սահմանված ժամկետները խախտելու դեպքում:

4.3. Պայմանագրով սահմանված որևէ ժամկետի փոփոխություն՝ այսինքն եթե Պատվիրատուն թույլ է տալիս իրեն վերաբերող ժամկետի/ժամկետների խախտում կամ եթե Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշում են ժամկետ վերանայել ապա Կատարողի պահանջով համապատասխանաբար հանգեցնում է Պայմանագրով ծառայությունների մատուցման հետ փոխկապակցված բոլոր ժամկետների փոփոխությանը: Կատարողն այդ մասին ծանուցում է Պատվիրատուին:

4.4. Կողմերը պարտավորվում են անվերապահորեն պահպանել պայմանագրի սկզբնական, միջանկյալ և վերջնական ժամկետները և Պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրանք չպահպանելու համար:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Ծառայության գինը կարգավորված է Պայմանագրին կից հավելվածներով:

5.2. Սույն Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ Կատարողի՝ Պայմանագրում նշված բանկային հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով, Պայմանագրին կից հավելվածներով սահմանված կարգով:

5.3. Պատվիրատուն պարտավորվում է Պատշաճ մատուցված ծառայությունների համար Կատարողի կողմից դուրս գրված հարկային հաշիվը հաստատել և վճարումը կատարել Պայմանագրին կից հավելվածներով սահմանված կարգով և ժամկետներում:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1. Ծառայությունների մատուցման ավարտին Կողմերը պարտավորվում են հաստատել հանձնման-ընդունման ակտ և/կամ հարկային հաշիվ:

6.2. Ծառայության մատուցման արդյունքում Կատարողի կողմից Պատվիրատուին հանձնման ենթակա մտավոր սեփականության օբյեկտները և/կամ աշխատանքային նյութերը/ֆայլերը ու դրանց շրջանակը սահմանվում է սույն Պայմանագրին կից հավելվածներով:

6.3. Կողմերի համաձայնությամբ Կատարողի կողմից դուրս գրված և Պատվիրատուի կողմից հաստատված հարկային հաշիվը հանդես կգա որպես Ծառայությունների պատշաճ և ամբողջական մատուցումը հավաստող հանձնման-ընդունման ակտ, եթե այդ մասին հատուկ նշվի Պայմանագրին կից հավելվածներով:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 01.12.2022թ.:

7.2. Պայմանագրի դրույթներն ունեն հետադարձ ուժ և տարածվում են մինչ-պայմանագրին փուլի նկատմամբ՝ Պայմանագրի 2.1.-րդ կետով սահմանված օր, ամիս, տարեթվից:

7.3. Անկախ սահմանված վերջնաժամկետից Պայմանագիրը շարունակում է գործել մինչև Կողմերի պարտավորությունների ամբողջական, պատշաճ կատարումը:

7.4. Պայմանագրի գործողությունը տարածվում է Պայմանագրով սահմանված մինչ-պայմանագրային փուլի նկատմամբ:

7.5. Պայմանագիրը կարող է ցանկացած ժամանակ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.6. Կողմերից յուրաքանչյուրը սույն Պայմանագիրը կարող է ցանկացած ժամանակ իր սեփական հայեցողությամբ միակողմանիորեն արտադատական կարգով վաղաժամկետ լուծել մյուս կողմին նվազագույնը 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելով:

Պայմանագրի լուծման դեպքում Կողմերը պարտավորվում են կատարել փոխադարձ հաշվարկներ այն բոլոր պարտավորություններով, որոնք ծագել են Պայմանագրի գործողության ընթացքում և Պայմանագիրը լուծելու դրությամբ առկա պարտավորությունները պետք է փոխադարձաբար պատշաճ կատարեն:

7.7. Երկարաժամկետ չորակված Պայմանագրով Կատարողի կողմից ծառայության կամ միաժամանակյա մատուցվող ծառայությունների կատարման ընթացքում Պատվիրատուի կողմից Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դիմում ներկայացնելու դեպքում վերջինս պարտավորվում է Կատարողին վճարել տուժանք Պայմանագրով սահմանված չափով:

7.8. Կողմերից յուրաքանչյուրն արտադատական կարգով իրավունք ունի Պայմանագիրը վաղաժամկետ լուծել Պայմանագրի էական խախտման դեպքում Կողմին ծանուցելուց հետո անմիջապես, եթե մյուս Կողմը թույլ է տվել իր պարտավորությունների էական խախտում և խուսափում է և/կամ հրաժարվում է վերացնել կատարված խախտումը մյուս Կողմի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու պահից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

8.1.1. Կատարողից պահանջել մատուցվող ծառայության որակի թերությունների վերացում կամ ուղղումների կատարում՝ ծառայությունը թերություններով մատուցված լինելը օբյեկտիվորեն հիմնավորելու դեպքում:

8.1.2. Վերահսկել Կատարողի կողմից Ծառայությունների կատարման ընդհանուր որակը և ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

8.1.3. Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով լուծել Պայմանագիրը:

8.1.4. Ներկայացնել Պայմանագրով սահմանված քանակով մեկնաբանություններ:

8.1.5. Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում գրավոր ձևով պահանջել տուգանք Պայմանագրով սահմանված կարգով:

8.1.6. Իրականացնել իր՝ Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

8.2. **Պատվիրատուն պարտավորվում է՝**

8.2.1. Պահպանել Պայմանագրով սահմանված բոլոր ժամկետները և կրել դրանք չպահպանելու համար Պայմանագրով սահմանված պատասխանատվությունը:

8.2.2. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:

8.2.3. Կատարողին տրամադրել մուտք դեպի իր աշխատանքային, արտադրական կամ այլ տարածքներ՝ Ծառայության պատշաճ մատուցումն ապահովելու համար:

8.2.4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն պահպանել Կատարողի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը:

8.2.5. Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում Պատվիրատուի պահանջով Պայմանագրով սահմանված կարգով վճարել տուգանք:

8.3. **Կատարողն իրավունք ունի՝**

8.3.1. Ներգրավել ենթակապալառուների:

8.3.2. Պայմանագրին կից հավելվածներով սահմանված դեպքերում և կարգով լուծել սույն Պայմանագիրը և/կամ հրաժարվել ծառայությունները մատուցելուց:

8.3.3. Պատշաճ մատուցված Ծառայության դիմաց ստանալ Պայմանագրով և կից Հավելվածներով սահմանված Ծառայության գինը:

8.3.4. Հաշվի առնելով ծառայությունների ստեղծագործական բնույթը Պատվիրատուի համաձայնությամբ հետաձգել ծառայության կատարման և/կամ ծառայության կատարման որևէ փուլի ժամկետները, եթե ժամկետի երկարաձգումը անհրաժեշտ է Պատվիրատուին լավագույն ծառայության արդյունք տրամադրելու համար:

8.3.5. Պատվիրատուի կողմից Հավելվածներով սահմանված քանակից ավելի մեկնաբանություններ թողնելու դեպքում Պատվիրատուի համաձայնությամբ պահանջել հատուցում՝ կախված մատուցվող ծառայության և/կամ փուլի առանձնահատկություններից կամ հրաժարվել փոփոխությունները կատարել:

8.3.6. Պատվիրատուի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում միակողմանիորեն վերանայել ծառայության և/կամ ծառայության փուլի ժամկետները և/կամ պահանջել տուգանքի վճարում սույն Պայմանագրով սահմանված կարգով:

8.3.7. Չմատուցել ծառայություն, որը կարող է բացասաբար ազդել Կատարողի գործարար համբավին:

8.3.8. Նշել ծառայությունների արդյունքների նկատմամբ հեղինակային իրավունքի մասին:

8.3.9. Իրականացնել իր՝ Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

8.4. **Կատարողը պարտավորվում է՝**

8.4.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

8.4.2. Ծառայությունների մատուցման ողջ ընթացքում ներդնել իր լավագույն ջանքը և առաջնորդվել Պատվիրատուի լավագույն շահով:

8.4.3. Վերացնել Պատվիրատուի կողմից մատնանշած և հիմնավորված ծառայության որակի թերությունները:

8.4.4. Պատվիրատուի կողմից գրավոր մեկնաբանություններ ստանալու կամ թերությունները վերացնելու կամ ուղղումներ անելու մասին պահանջ ստանալիս Պատվիրատուին ներկայացնել թերությունները շտկելու և մեկնաբանություններին անդրադառնալու առավելագույն ժամկետները, դրանք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Կողմերը ՀՀ օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

9.2. Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում Կատարողը կարող է Պատվիրատուի նկատմամբ կիրառել տուժանք՝ յուրաքանչյուր կետանցված օրվա համար ծառայության և/կամ ծառայության տվյալ փուլի գնի 0,1 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան Ծառայության տվյալ մասի Գնի(ներառյալ ԱԱՀ) 10%-ը:

9.3. Պայմանագրով սահմանված ժամկետները խախտելու դեպքում Պատվիրատուն կարող է Կատարողի նկատմամբ կիրառել տուժանք՝ յուրաքանչյուր կետանցված օրվա համար ծառայության և/կամ ծառայության տվյալ փուլի գնի 0,1 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան Ծառայության տվյալ մասի Գնի(ներառյալ ԱԱՀ) 10%-ը:

9.4. 8.2.-րդ և 8.3.-րդ կետերում սահմանված դեպքերում Տույժի վճարման պահանջը պետք է ձևակերպվի գրավոր և ստորագրվի Պատվիրատուի լիազորված ներկայացուցչի կողմից: Եթե Ծառայության փուլի գին սահմանված չէ, ապա սույն կետում նախատեսված տուժանքը հաշվարկվում է տվյալ Ծառայության գնից:

9.5. Պայմանագրի 7.7.-րդ կետով սահմանված դեպքում Կատարողը կարող է Պատվիրատուի նկատմամբ կիրառել տուժանք Պայմանագրով **ծանուցման պահին մատուցվող** ծառայությունների փուլի կամ միաժամանակյա մատուցվող փուլերի գնի 100 տոկոսի չափով:

9.6. Պատվիրատուի կողմից վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Կատարողը կարող է Պատվիրատուի նկատմամբ կիրառել տուժանք՝ չվճարված գումարի 0,1%-ի (զրո ամբողջ մեկ տասնորդական) չափով՝ կետանցի յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, որը չի կարող գերազանցել չվճարված գումարի 10%-ը (տաս տոկոսը): Տույժի վճարման պահանջը պետք է ձևակերպվի գրավոր և ստորագրվի Կատարողի լիազորված ներկայացուցչի կողմից:

9.7. Որևէ Կողմի գործարար համբավը արատավորելու դեպքում մյուս Կողմը պատասխանատվություն է կրում իր կողմից արատավորման արդյունքում մյուս Կողմի կրած գույքային բոլոր վնասների համար:

9.8. Տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից: Սույն Պայմանագրով կամ գործող օրենսդրությամբ նախատեսված տույժը կարող է կիրառվել համապատասխան Կողմի կողմից այն դեպքում՝ եթե այդ Կողմը մյուս Կողմին գրավոր ծանուցել է տույժի կիրառման իր մտադրության մասին: Տույժի կիրառումը համարվում է Կողմի իրավունքը և ոչ թե պարտականությունը: Բոլոր դեպքերում՝ Կողմին տրվում է իրավունք ու հնարավորություն վերացնելու խախտումը՝ սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում:

10. ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Պայմանագրով կարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

10.2. Պայմանագրով կարգավորվող հարաբերությունների կապակցությամբ ծագող բոլոր վեճերը Կողմերը պարտավորվում են լուծել բանակցությունների միջոցով: Բանակցային գործընթացը Կողմերին չի ազատում պարտականությունների կատարումից:

10.3. Վեճը բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում Կողմը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ ընդհանուր իրավասության դատարան:

11. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

11.1. Էքսկլյուզիվության պայմանը Կողմերի համաձայնությամբ սահմանվում է սույն Պայմանագրին կից հավելվածներով:

11.2. Հավելվածներով էքսկլյուզիվության պայման չսահմանվելու դեպքում Կողմերը համաձայնում են, որ Կատարողը իրավասու է համագործակցելու և ծառայություններ մատուցելու ցանկացած այլ երրորդ անձանց, իսկ Պատվիրատուն նույնանման ծառայությունների մատուցման վերաբերյալ համագործակցել երրորդ անձանց հետ:

11.3. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Կողմերը պարտավորվում են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից/անգործությունից, որը կարող է վնաս հասցնել մյուս կողմի շահերին և/կամ բարի/գործարար համբավին:

12. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12.1. Կատարողի կողմից ծառայությունների մատուցման ընթացքում և մատուցման արդյունքում ստեղծված օբյեկտները հանդիսանում են մտավոր սեփականության օբյեկտ:
12.2. Կատարողին պատկանում են մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքները (հեղինակային իրավունք):
12.3. Կատարողը մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ բացառիկ, գույքային իրավունքները փոխանցում է Պատվիրատուին նրա կողմից Պայմանագրով սահմանված բոլոր պարտականությունները կատարելուն պես:
12.4. Հավելվածում ծառայության տարբերակների քանակ նախատեսված լինելու դեպքում Պատվիրատուին է անցնում միայն իր կողմից ընտրված և հաստատված տարբերակի նկատմամբ գույքային բացառիկ իրավունքները, բացառությամբ, երբ Կողմերը ձեռք են բերել այլ պայմանավորվածություն:
12.5. Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից Ծառայության մատուցման արդյունքում Կատարողի կողմից ստեղծված և Պատվիրատուի կողմից հաստատված Մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ ողջ ծավալով Պատվիրատուին են փոխանցվում մտավոր սեփականության վերջնական օբյետի գույքային բացառիկ իրավունքները:
12.6. Պատվիրատուն պարտավորվում է մտավոր սեփականության օբյեկտն օգտագործել այնպես, որ չոտնահարի Կատարողի ոչ գույքային իրավունքները:
12.7. Հավելվածով նախատեսված լինելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին նշել որպես մտավոր սեփականության օբյեկտի հեղինակ:

13. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

13.1. Կողմերն ընդունում են, որ սույն գաղտնիության պայմանները, մինչ-պայմանագրային փուլի ժամանակ հայտնի դարձած տեղեկատվությունը՝ ներառյալ, բայց ոչ սահմանափակված, յուրաքանչյուր կողմի ձեռնարկատիրական գործունեության պլանավորումը, մասնագիտական ոլորտի նախագծերը, որևէ Կողմից հայտնի դարձած ծառայությունների գները, հաճախորդների, գործընկերների անունները, շուկայավարման պլանավորումը, աշխատանքի մեթոդաբանությունը և ընթացքը, ձեռնարկատիրական հնարավորությունները, Կողմերի աշխատակազմի մասին ցանկացած տեղեկատվություն, Կողմերի՝ դեռևս չհրապարակված հետազոտությունների արդյունքները, ծառայության մատուցման շրջանակում բոլոր հանդիպումների ժամանակ գրավոր և բանավոր ձևով տրամադրված նյութերը, Կողմերի անձնական տվյալները կամ որևէ այլ երրորդ կողմին վերաբերող տեղեկատվությունը հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն (այսուհետ՝ Գաղտնի տեղեկատվություն):
13.2. Սույն Համաձայնագրի շրջանակներում Գաղտնի տեղեկատվություն են համարվում նաև բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի և/կամ վերջինիս վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը կողմերից որևէ մեկը մտադիր է եղել գաղտնի պահել, և մյուս Կողմը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:
13.3. Գաղտնի տեղեկատվությունը չպետք է ներառի այնպիսի տեղեկատվություն, որը.
ա) այժմ արդեն հայտնի է, կամ ապագայում դառնում է հանրամատչելի ոչ Կողմերից որևէ մեկի մեղքով;
բ) Կողմերն ինքնուրույնաբար են մշակել առանց որևէ Գաղտնի տեղեկատվության օգտագործման; կամ
գ) Կողմերը ստանում են այլ՝ երրորդ կողմից, որն իրավունք ունի փոխանցել կամ բացահայտել այդ տեղեկատվությունը:
13.4. Արգելվում է սույն պայմանագրի 13.1-րդ և 13.2-րդ կետերով նախատեսված Գաղտնի տեղեկությունների հրապարակումը, մշակումը, օգտագործումը:
13.5. Կողմերը պարտավորվում են կանխարգելել իրենց տիրապետության տակ գտնվող, որևէ Կողմի Գաղտնի տեղեկատվության հրապարակումը, տարածումը կամ անիրավասու օգտագործումը իրենց և/կամ երրորդ անձանց կողմից:
13.6. Կողմերը պարտավորվում են չօգտագործել Գաղտնի տեղեկատվությունը երրորդ անձանց շահի համար:

Սույն բաժնի գործողությունը տարածվում է միչև դրա փաստացի ստորագրման պահը կողմերի միջև ցանկացած այլ տեսակի գործարքների, պայմանագրի հիման վրա ծագած իրավահարաբերությունների ծագման պահից և գործում է Կողմերի միջև գործարքների, պայմանագր(եր)ի գործողության ողջ ժամանակահատվածում և անկախ հիմքից ու պատճառից նման պայմանագր(եր)ի գործողությունը դադարելուց հետո:

14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

14.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերը չեն համարվում խախտում թույլ տված և չեն կրում պատասխանատվություն, եթե ապացուցում են, որ դա հետևանք է տվյալ Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող արտակարգ և անկանխելի հանգամանքների (ֆորս-մաժոր) հետևանք:

14.2. Արտակարգ և անկանխելի հանգամանքները ներառում, սակայն չեն սահմանափակվում՝ բնական աղետներ, արտակարգ դրություն, ռազմական դրություն, ահաբեկչություն:

14.3. Ֆորս-Մաժորային իրավիճակներում Կողմերը պարտավորվում են հնարավորինս գործել Պայմանագրով սահմանված պարտականություններին համապատասխան:

Ծառայության ժամկետներն ուշացնող Կողմը պետք է ֆորս-մաժորային հանգամանքի մասին տեղեկանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնի մյուս Կողմին Ծառայության ժամկետների ակնկալվող ուշացման տևողության մասին, եթե այն հայտնի է: Որևէ ուշացում, որը հետևանք է ֆորս-մաժորային հանգամանքի, հարգելի է համարվում ֆորս-մաժորային հանգամանքի ամբողջ տևողության ընթացքում:

Եթե ֆորս-մաժորային հանգամանքը պարտականությունների կատարումը հետաձգում է 3 (երեք) ամսից ավել ժամանակով, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավասու է միակողմանիորեն լուծել Պայմանագիրը:

15. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Կողմերից յուրաքանչյուրը հաստատում է, որ ունի սույն Պայմանագիրը կնքելու և այն կատարելու իրավունք և լիազորություն:

15.2. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

15.3. Պայմանագրի որևէ դրույթի/կետի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների/կետերի անվավերության:

15.4. Պայմանագիրը կարող է փոփոխվել միայն Կողմերի միջև համաձայնեցված և ստորագրված առանձին գրավոր համաձայնագրով, բացառությամբ օրենսդրությամբ և սույն Պայմանագրով սահմանված դեպքերի: Սույն Պայմանագրի բոլոր հավելվածները, Կողմերի միջև սույն Պայմանագրի վերաբերյալ կնքված բոլոր համաձայնագրերը և այլ փաստաթղթերը վերջինիս անբաժանելի մասն են կազմում:

15.5. Պայմանագիրը, դրան կից հավելվածները փոխարինում են Կողմերի միջև բոլոր նախորդող համաձայնությունները: Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է «Հանդիպում բրենդինգային ընկերությունների հետ» վերնագրով "PDF" ֆորմատի գրավոր ֆայլը/(փաստաթուղթը)՝ Կողմերի միջև ուղարկված այն ճշգրտող բոլոր էլեկտրոնային նամակների համակցությամբ և կցված է Պայմանագրին: Հակասությունների դեպքում գործում է վերջին հաստատված տարբերակը՝ համաձայն օր, ամիս, տարեթվի:

15.6. Պայմանագիրը գերակայում է դրան չհամապատասխանող ցանկացած պայմանի նկատմամբ, որը բխում է կիրառելի օրենսդրությունից, սովորույթից կամ գործարար սովորույթից: Բոլոր չհամապատասխանող պայմանների կիրառումը սույնով բացառվում է: Որևէ Կողմի որևէ վարքագիծ չի կարող համարվել որպես մյուս Կողմի կողմից առաջարկվող պայմանի ընդունում կամ հրաժարում:

15.8 **Ծանուցումներ**. Կողմերի միջև Պայմանագրի կատարման շրջանակներում իրականացվող հաղորդակցությունը (գրագրությունը), իրականացվում է Պաշտոնական հաղորդակցության միջոցներով:

Պայմանագրի կապակցությամբ ներկայացված ցանկացած ծանուցում համարվում է ստացված պաշտոնական հաղորդակցության միջոցներով ուղարկելու պահից:

Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս Կողմին գրավոր տեղեկացնել Պաշտոնական հաղորդակցության միջոցների փոփոխության մասին այդպիսի փոփոխության կատարումից հետո ոչ ուշ քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Փոստային հասցեի և/կամ այլ վավերապայմանների փոփոխությամբ

պայմանավորված ծանուցման չստացման բոլոր բացասական հետևանքները կրում է փոփոխության մասին ծանուցման պարտականություն ստանձնած Կողմը:

Պայմանագրի կողմը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ ծանուցումներն ուղարկվել են այդ կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

16. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՑՈՒԿ ԷՆԴ ԲԵՐԳ» ՍՊԸ	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
ՀՎՀՀ՝ 02674049 Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, 0001, ք. Երևան, Սայաթ-Նովա 25, բն 10 Բանկային տվյալները՝ «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ Հաշվեհամարը՝ 220493333177000	ՀՎՀՀ՝ 01540062 Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Գ. Հովսեփյան 26 Բանկային տվյալները՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Հաշվեհամարը՝ Հ/Հ՝ 2050022082671001
/Կ.Տ./	/Կ.Տ./
Տնօրեն՝ Աշոտ Հովակիմյան	Գործադիր տնօրեն՝ Հ.Մովսիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2
«ՑՈՒԿ ԷՆԴ ԲԵՐԳ» ՍՊԸ-ի և
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև
«30» սեպտեմբերի 2022թ. թիվ GA-EU/09/2022
ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի

ՀՀ, ք. Երևան

«30» սեպտեմբերի 2022թ.

Ծառայությունների ցանկը, գինը և վճարման կարգը.

#	Անվանում	Միավորների քանակ	Միավորի արժեքն առանց ԱԱՀ	Ընդամենը արժեքն առանց ԱԱՀ
Փուլ 1 Կրեատիվ Պլատֆորմա				**6,500,000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ**
1	Կոմունիկացիոն պլատֆորմի գաղափարական կոնցեպտի գլխավոր ասելիքի մշակում	1 (մեկ)		
2	Կոմունիկացիոն պլատֆորմի վիզուալ կոնցեպտի / գլխավոր վիզուալի / օգտագործման ուղեցույցի մշակում	1 (մեկ)		
Փուլ 2 Արշավ				**6,800,000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ**
3	Գովազդային արշավի կոմունիկացիոն կոնցեպտի / ստրատեգիայի մշակում	1 (մեկ)		
4	Գովազդային արշավի գլխավոր հոլովակի սցենարի մշակում	1 (մեկ)		
5	Գովազդային արշավի մեխանիկայի մշակում	1 (մեկ)		
Փուլ 3 Հավելյալ վիզուալ նյութերի մշակում				**3,300,000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ**
6	Սոցիալական ցանցերի համար ետնանկար / հաշվի գլխավոր նկար	1 (մեկ)		
7	Բաններ	1 (մեկ)		
8	Բիլբորդ	1 (մեկ)		
9	Սքրոլլեր	1 (մեկ)		

10	Պաստառ A1	1 (մեկ)		
11	Պաստառ A3	1 (մեկ)		
12	Պաստառ A4	1 (մեկ)		
13	Թռուցիկ	1 (մեկ)		
14	Տոմսեր	1 (մեկ)		
15	Բացիկ	1 (մեկ)		
16	Տոպրակ A4	1 (մեկ)		
17	Թղթի Տոպրակ A3	1 (մեկ)		
18	Ստիկեռներով Թերթիկ	1 (մեկ)		
19	Նոթատետր A5 հիմքով, զսպանակով վերևից բացվող	1 (մեկ)		
20	Նոթատետր գիրք 100 էջ, 16 x 16 չափերի, հաստ կազմով, լոգոյի տպագրությամբ	1 (մեկ)		
21	Սեղանի դրոշակ կտորից, 22/11 չափերի, գնորդի ապրանքանիշի տպագրությամբ, մետաղյա ձողիկով և հենակով	1 (մեկ)		
22	Թղթապանակ A4 ֆորմատի	1 (մեկ)		
23	Էկո գրիչ	1 (մեկ)		
24	Մատիտ	1 (մեկ)		
25	Ժապավեն անցաքարտի համար	1 (մեկ)		
26	Անցաքարտ	1 (մեկ)		
27	Դրոշ	1 (մեկ)		
28	Կրծքանշան ՝ քառակուսի, մետաղից լոգոյով	1 (մեկ)		
29	Կրծքանշան կլոր պլաստմասե	1 (մեկ)		
30	Հեռախոսի համար պատյան / հենակ	1 (մեկ)		
31	Բաժակ	1 (մեկ)		
32	Էկո Բաժակ	1 (մեկ)		
33	Տերմոս	1 (մեկ)		

34	Հուդի XS, S, M, L, XL, XXL	1 (մեկ)		
35	Գլխարկ Ձմեռային	1 (մեկ)		
36	Շարֆ	1 (մեկ)		
37	Գուլպա	1 (մեկ)		
38	Պայուսակ	1 (մեկ)		
39	Ուսապարկ	1 (մեկ)		
40	Կտորից Պայուսակներ 30 x 45 սմ, Բռնակ ՝ 2.5 x 50 սմ	1 (մեկ)		
41	Ժիլետ	1 (մեկ)		
42	Սիլիկոնե Թևնոցներ	1 (մեկ)		
43	Սիլիկոնե Թևնոցներ ՝ ֆոսֆորով	1 (մեկ)		
44	Անձնագրի Պատյան	1 (մեկ)		
45	Ակնոց	1 (մեկ)		
46	Խոսափող	1 (մեկ)		
Փուլ 4 Հավելյալ թվային վիզուալ նմուշների մշակում				**1,700,000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ**
47	Վեբսայթի համար նախատեսված վիզուալ	1 (մեկ)		
48	Թվային վիզուալ նմուշների մշակում	6 (վեց)		
Պայմանագրի գինն առանց ԱԱՀ				**18,300,000 (տասնըութ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ**

ծառայության գնի վճարման կարգը	☐ Պայմանագիրը և սույն հավելվածը հաստատելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում
	✓ 1-ին, 2-րդ և 4-րդ փուլերի ծառայությունների համար՝ Պայմանագիրը, սույն հավելվածը, հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը հաստատելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
	✓ 3-րդ փուլով նախատեսված ծառայությունների համար՝ հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը հաստատելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
Ծառայությունների նկարագրին և/կամ բաղադրատարրերին վերաբերող հատուկ պայմաններ	
էքսկլյուզիվության պայման.	☐ Նախատեսված է
	✓ Նախատեսված չէ

	☐ Այլ տարբերակ, /խմբագրելի/
Աշխատանքային նյութերի/ֆայլերի տրամադրում՝	☐ չի ներառում
	✓ ներառում է
Մեկնաբանությունների հնարավորության տրամադրում՝	☐ չի ներառում
	☐ ներառում է մինչև ..... մեկնաբանություն պայմանագրի ամբողջ ծավալի համար
	☐ ներառում է մինչև ..... մեկնաբանություն յուրաքանչյուր փուլի համար
	✓ ներառում է մինչև 5 մեկնաբանություն յուրաքանչյուր ծառայության համար
	☐ ներառում է մինչև ..... մեկնաբանություն՝ ..., ..., ... ծառայությունների համար, և/կամ մինչև ..... մեկնաբանություն՝ ..., ..., ... ծառայությունների համար
Պատվիրատուին է հանձնվում հետևյալ օբյեկտների նկատմամբ բացառիկ գույքային իրավունքները.	✓ Բոլոր մտավոր սեփականության օբյեկտների և աշխատանքային նյութերի նկատմամբ գույքային իրավունքները:
	☐ Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ գույքային իրավունքները:
	☐ Այլ տարբերակ, /խմբագրելի/
Հեղինակային իրավունքի նշում.	☐ Պատվիրատուն պարտավոր է նշել Կատարողի հեղինակային իրավունքի մասին
	✓ Պատվիրատուն իրավունք ունի չնշել Կատարողի հեղինակային իրավունքի մասին
Ժամկետների վերաբերող կարգավորումները.	
Տեղեկատվություն տրամադրելու ժամկետը.	☐ օր, ամիս, տարի
	☐ Սույն հավելվածը հաստատելուց հետո առավելագույնը .... օր/շաբաթ/ամիս ընթացքում:
	✓ Սույն հավելվածը հաստատելուց հետո 5 աշխատանքային օր:
	☐ Այլ տարբերակ, /խմբագրելի/
Սկզբնական ժամկետը.	☐ օր, ամիս, տարի
	✓ Կանխավճարը վճարելու հաջորդ աշխատանքային օրը:
	✓ Պատվիրատուի կողմից Տեղեկատվությունը տրամադրելու հաջորդ աշխատանքային օրը:
	☐ Այլ տարբերակ, /խմբագրելի/

Միջանկյալ ժամկետները.	✓ Տարբերակը ստանալուց հետո 1 աշխատանքային օր:
	☐ Տարբերակը ստանալուց հետո .... օր:
	☐ Այլ տարբերակ, /խմբագրելի/
Մեկնաբանությունների հիման վրա Կատարողի կողմից փոփոխություններ կատարելու ժամկետները.	✓ Փուլային ծառայության դեպքում մեկնաբանությունների համար նախատեսված հաջորդ փուլի ընթացքում:
	☐ Մեկնաբանությունները ստանալուց հետո .... աշխատանքային օր:
Ծառայության(ների) մատուցման վերջնական ժամկետը.	☐ օր, ամիս, տարի:
	✓ 30.10.2022թ.
	☐ Այլ տարբերակ, /խմբագրելի/
Դուրս գրված հարկային հաշվի հաստատման և վճարման ժամկետը.	✓ Այն ստանալուց հետո 5 (Հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
Ծառայությունների հանձնում-ընդունումը.	
Հաստատված հարկային հաշիվը.	☐ Հավասարեցվում է հանձնման-ընդունման ակտին
	✓ Չի հավասարեցվում հանձնման-ընդունման ակտին
Հանձնման-ընդունման ակտը պետք է հաստատվի.	✓ 1-ին, 2-րդ և 4-րդ փուլերի ավարտին՝ հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը ստանալուց հետո առավելագույնը եռօրյա ժամկետում:
	✓ 3- րդ փուլի ավարտին՝ հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը ստանալուց հետո առավելագույնը եռօրյա ժամկետում:
Հանձնում-ընդունումը իրականացվում է.	☐ Յուրաքանչյուր ծառայության ավարտին
	✓ 1-ին, 2-րդ և 4-րդ փուլերի ավարտին
	✓ 3- րդ փուլի ավարտին
	☐ Հավելվածով սահմանված բոլոր ծառայությունների ավարտին
Պաշտոնական հաղորդակցության միջոցները.	Պատվիրատու էլ. հասցե՝ mane.sargsyan@1tv.am «Սլեք » (Slack) կարճ հաղորդակցությունների փոխանակման թվային հարթակի հղում՝ https://zuck-agency.slack.com/archives/C03VA0P54V7

	Կատարող ՝ էլ. հասցե՝ vanesa@zuckagency.com «Սլեք » (Slack) կարճ հաղորդակցությունների փոխանակման թվային հարթակի հղում՝ https://zuck-agency.slack.com/archives/C03VA0P54V7

Կողմերի վավերատարրերը և ստորագրությունները

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՑՈՒԿ ԷՆԴ ԲԵՐԳ» ՍՊԸ ՀՎՀՀ՝ 02674049 Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, 0001, ք. Երևան, Սայաթ-Նովա 25, բն 10 Բանկային տվյալները՝ «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ Հաշվեհամարը՝ 220493333177000 /Կ.Տ./ Տնօրեն՝ Աշոտ Հովակիմյան	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** ՀՎՀՀ՝ 01540062 Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Գ. Հովսեփյան 26 Բանկային տվյալները՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Հաշվեհամարը՝ Հ/Հ՝ 2050022082671001 /Կ.Տ./ Գործադիր տնօրեն՝ Հ.Մովսիսյան